

Արձանագրություն թիվ 2

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2020թ սեպտեմբերի 28-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2020-21 ուս.տարվա աշխատանքային պլանի հաստատում:

2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին :

3. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնում այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս.տարվա աշխատանքային պլանի նախագիծը բաժանված էր ամբիոնի վարիչներին և գիտխորհրդի անդամներին, մանրամասն ծանոթանալու և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելու համար: Աշխատանքային ծրագիրը համալրված տարբերակով արդեն կա:

Առաջարկում եմ հաստատել ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս.տարվա աշխատանքային պլանը:

Խորհուրդը քվեարկությամբ միաձայն հաստատեց ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս.տարվա աշխատանքային պլանը:

Քիմիայի ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս.տարվա աշխատանքային պլանը կցվում է:

ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2020-21 ուսումնական տարվա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Սեպտեմբեր

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2020-21 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

3. Ընթացիկ հարցեր՝ համակցված՝ հեռահար և առկա ուսուցուման կազմակերպման գործընթաց:

Հոկտեմբեր

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաշվետվությունը մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

2. Ամբիոնների վարիչների հաղորդումը գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման մասին:

3. Ընթացիկ հարցեր:

Նոյեմբեր

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

2. Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:

4. Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:

5. Ընթացիկ հարցեր:

Դեկտեմբեր

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական ծրագրերի գիտական սեմինարների կազմակերպման մասին:

2. Հաղորդում բազային ֆինանսավորմամբ և դրամաշնորհային գիտական թեմաների մասին, հաշվետվությունների հաստատում:

3. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:

4. Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:

5. Ընթացիկ հարցեր:

Հունվար

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Փետրվար

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Ընթացիկ հարցեր:

Մարտ

1. Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Ապրիլ

1. Ֆակուլտետի ՈւՆ նախագհի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2020-21 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
3. Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Մայիս

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2020-21 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Հունիս

1. Ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:

2. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2020-21 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

3. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:

4. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:

5. Ընթացիկ հարցեր:

Քննարկված և հաստատված է քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2020թ. սեպտեմբերի 28 -ին կայացած նիստում՝ արձանագրություն թիվ 2:

Պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան- անցնենք օրակարգի երկրորդ հարցին՝ Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր – Ն.Ա.Դուրգարյան

-Լաբորատոր աշխատանքները կատարվում են ներկայացված ծրագրի համաձայն: Դրանք տևում են 1 ժամ, պահպանելով սոցիալական հեռավորություն: Լաբորատորիաներն ախտահանվում են դասից առաջ և հետո, ապահովված են ախտահանիչ հեղուկով:

-Ֆիզիկական և կոլոդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր-Շ.Ա.Մարգարյան

-Այսօրվա դրությամբ կատարվում է ամեն ինչ լաբորատոր աշխատանքների ընթացքը նորմալ ապահովվելու համար:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ- Ա.Ի.Մարտիրյան

- Մեր ամբիոնում էլ նույն վիճակը՝ կատարվում է ամեն ինչ լաբորատոր աշխատանքների ընթացքը նորմալ և անվտանգ ապահովելու համար:

Խորհրդի նախագահ , պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան,- անցնենք օրակարգի երրորդ հարցին: Մենք այստեղ երկու կետ ունենք քննարկելու

1. Համակցված ուսուցման հեռահար տարբերակն ինչպես է ընթանում:

Ն.Ա.Դուրգարյան - Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: Մեր ամբիոնում դասախոսություններն ընթանում են նորմալ: Բնարկե այս ուսուցման գործընթացի ամբողջ ծանրաբեռնվածությունը ընկնում է դասախոսի վրա: ա/ Մեզ հայտնի խնդիրներն են՝ կաված տեսախցիկի և բարձրախոսների հետ: Դասախոսներն շատ հաճախ համալսարանում օտվում են իրենց համակարգիչներից դասախոսությունն իրականացնելու համար: Առավոտյան

Ժամերին խնդիր է լինում նաև ինտերնետի հետ: Հիմնականում ԵՊՀ-ի e_learning -հարթակում դրվում է Zoom-ի տվյալները, որով իրականացվում է դասախոսությունը:

Վ.Խաչատրյան- ուսանողուհի. Ուսանողները, որոնք դասին միանում են հեռախոսով կամ հին ծրագրով համակարգիչով նույնպես խնդիրներ ունեն e_learning –հարթակի հետ: Ուզում եմ նաև նշել, որ առկա ուսուցումը շատ ավելի նախընտրելի է քան հեռահարը:

Քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ- Ա.Ս.Գալստյան,- Հարգելի գործընկերներ, ամբիոնի վարիչներ ուզում եմ տեղեկացնել, որ բոլոր հարթակների տվյալները, որով իրականացվում են դասախոսությունները պետք տեղադրված լինեն ԵՊՀ-ի e_learning – հարթակում: Որպեսզի տեսուչները դասընթացի ցանկացած պահին հնարավորություն ունենան մուտք գործելու և ֆիքսելու դասապրոցեսը: Դա ԵՊՀ-ի պայմանն է:

Ամբիոնների վարիչները նշեցին, որ հեռահար ուսուցումը կազմակերպված է նորմալ: Դասախոսները, որոնք չեն տեղադրել կայքում Zoom-հարթակի տվյալները շատ արագ կշտկեն այդ բացթողումը:

Նիստի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղուչիկյան

Նիստի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան